

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Խաչպար ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2024/15-6-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
37	Դիաբակ	Ինտերսեն պլուս	Հակաբակտերիալ հեղուկ լվացող միջոց հանդիսացող խտանյութ է: Աշխատանքային պատրաստի լուծույթը պիտանի է 10 - 14 օր, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Որպես ազդող նյութ պարունակում է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ: Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ տարբեր գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, այդ թվում՝ տուբերկուլոզի հարուցիչների, ներհիվանդանոցային և հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, խոլերա, սիբիրյան խոց), Կանդիդա տեսակի սնկերի, դերմատոֆիտերի և բորբոսասնկերի, վիրուսների (այդ թվում՝ գրիպի, ներառյալ Ա թռչնի գրիպ H5N1, պոլիոմիելիտի, հեպատիտ Բ- ի, մարդու իմունային անբավարարության վիրուսի): Միջոցն օժտված է լվացող հատկություններով, չի առաջացնում մետաղների ժանգոտում, չի փչացնում մշակվող մակերեսները, չի գուևաթափում հյուսվածքները, չի ֆիքսում օրգանական աղտոտվածությունը: Միջոցը ոչնչացնում է ճարպի, յուղի, մրի, սպիտակուցային նստվածքների և շատ այլ դժվար հեռացվող

		նյութերի բծերը և նստվածքները ցանկացած տեսակի մակերեսներից (ապակի, հայելիներ, մետաղ, կերամիկա, գորգ, կաշի, քրոմապատ արտադրատեսակներ, բետոն, սալիկ, ռետին, պլաստիկ, վինիլ, ճենապակի, հախճապակի և այլ, այդ թվում՝ ծակոտկեն): Ախտահանիչ միջոցը նախատեսված է կուվեզների և դրանց հարմարանքների ախտահանման համար.: Փաթեթավորումը 1լ պոլիէթիլենային տարաներում: Շնչական ապարատների և հարմարանքների (այդ թվում՝ անեսթեզիոլոգիական խողովակների), ատամնաբուժության մեջ կիրառվող ալգինատային, սիլիկոնային նյութերից, պոլիէթերային խեժից պատրաստված ատամնաբուժական արտատպվածքների, մետաղներից, կերամիկայից, պլաստմասե և այլ նյութերից ատամնապրոթեզային կաղապարների, արտիկուլյատորների, թքարտածծիչների և արտածծիչ հարմարանքների ախտահանման և լվացման համար, բժկական նշանակության իրերի (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական, այդ թվում՝ պտտվող, գործիքներ, ճկուն և կոշտ էնդոսկոպներ և դրանց համար նախատեսված գործիքներ) ախտահանման և նախամանրէազերծային մաքրման (այդ թվում՝ ախտահանման հետ համակցված) համար: Հանձնելու պահին խտանյութի պիտանելիության ժամկետի 1/2 ի առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի հավաստագրի/երի առկայությունը պարտադիր է: ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգի առկայությունը պարտադիր է: Նոր, չօգտագործված: Տեխնիկական բնութագրի կազմման հիմք է հանդիսացել ՀՀ ԱՆ մեթոդական հրահանգը: Եթե առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:
--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ბიზნესი Uკი в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БУΔΑᲒ-2024/15-6-ბიკი ниже
представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
37			